70. ՀԱՐՈՒՍՏԸ ՄԸՆ ԷԼ ՔՅԱՍԻԲԸ

Ընում ա, չի ընում մին հարուստ մարթ ա ընում։ Էտ մարթին կնեգյը խոխա չար պուրում։ Էտ հարուստ մարթըտ մին դոնում եր կալավ ուրան ծառանեն, քյինից էրուշ երգյրնե ապրանքնե ինքյ ունելի, ծխելի։

Հըղեցը տահանք մնում ըն մին շենում, մին քյասիբ մարթու տան։ Ըրուգյունը հաց ուտելի վախտը, էտ քյասիբ մարթին պիծի խոխան կյամ ա տահանց կոշաը, սկսում տահանց նըհետ խաղ անելը։

Հարուստը էտ խուխեն շատ ա սիրում, ընդրան հետե, վեր ուրան խոխա չունար։

Էտ հարուստըտ էնքան ա սիրում էտ խուխեն, վեր խուխեն մորը, հորը ասում ա. — Էտ խուխեն տեղ վըեսկե տանք, խոխան մըեղ կըտա՞ք։

Մարթ նան կնեգյ մըսլըհաթ ըն անում, ասըմ. — Վեր տանք, վըեսկեն ինքյ օնինքյ, մըեղ էլհա խոխա կինի։

Ըռութանա խոխան տամ ըն տրանց, վըեսկեն ինքյ օնում։ Հարուստը ուրան ծառաներեն նըհետ խոխան յոր ա օնում, քյնում ըն ուրանց հըղեն։

Հըղեցը պտահում ըն մին բխտըյեշու։ Հարուստը բախտեն եշիլ ա տամ։

Բըխտըյեշին ասում ա. — Տու շատ հարուստ մարթ ըս, ամմա կնեգյըտ խոխա չի պիրում։ Մին քանե տրոնանը ետը մին խոխա յա

իննական, ամմա քու Հարուստութունըտ մին քյսիբու փայ ա տանը-լական։

Վեր բըխտըլեշին ասըմ ա, պըրծնում, տրանք միկա տեն ըն կենում, էտ խոխան թողում ծմակեն մաչին, մին ծառու փչակում, ուրանք քյինում։

Էտ հարուստը քյինալանը ետը, քյասիրը ուրան կնգանը նհետ մըսլըհաթ ա անում, վեր էտ վրեսկավը տներ շինին։

Քյասիրը մին քանե մարթ ա յոր օնում, քյինըմ ծմակը, վեր փադ կտրե, պիրի։

Ծմակումը նա լսում ա մին խոխու լացու սաս։ Բիդի ինդի քյնում ա, տեսնում ուրան խոխան։ Յոր ա օնում պուրում տոն։

Տահանք էտ փողավը մեծ-մեծ տներ ըն շինում, մաչին ապրում։ Տղան կյամ ա տեռնում տասնութ-քսան տրեկան։

Հարուստը ուրան առուտուրը օրիշ երգյիրնըերում պըռծընելանը ետը կյամ ա տոն։ Անց ա կըենըմ մին խիլլա վախտ։ Էտ հարուստը մըն էլ ա որոշում, վեր քյինի նորու, տական էլհա առուտուրի։

Քյնամ ա էլհա էն համան շենը, վեր առաչի դոնումը ըլալ ա։ Տեսնում ա էն քյասիրը լավ-լավ տներ շինած, մաչին ապրում ա։ Քյինում ա, նի մնում ընդեղ։ Հարուստը մըն էլ քյասիրը ուրուր նըհետ ղրուց ըն անում, թա էս տները հո՞ւնց ա շինալ։

Քյասիրը նաղլ ա անըմ, ասըմ. — Մին դոնըմ մին հարուստ եկալ ա, մնացալ մեր տանը, հունցը տուք։ Իմ խոխաս եր ա կալալ, հոքյըվերթի, ետնան էս օյինը տրալ կլխես։

Քյասիրը մանրամասը նաղլ ա անում, հինչ վեր հարուստին ղոլան կըդարվալ ա։

Հարուստն ասում ա։— Պա էտ խոխան հո՞ր ա։

Քյասիրն ասում ա.— Կկյա։

Հարուստեն մեթկը փոխվում ա, օղում ա, վեր էտ տղեն կլխեն մին քյալագյ տինի։ Ասում ա.—Պա, մարթ չինի՞լ ստեղ, վեր ղարկինքյ, քյինի մեր տոնը, թըխտեր ըմ թողալ, պիրի։

Քյասիրն ասում ա.— Պա մեր խոխան հի՞նչ ա, կըքյինի։

Մին խրեգյ կենում ըն, տեսնում խոխան կյամ ա։ Էտ հարուստը մին թոխտ ա կյրում, մաչին կյրում, վեր. «Ա կնեգյ, էտ խոխան վեր կյա, կտաք ղսարեն կլոխը կտրե»։ Էտքանանը ետը, էտ տղեն ասում ա.— Կտանիս տաս մեր կնգանը, թըխտերը կտա, ճելլի կպիրիս։

Խոխան թոխտը յոր ա օնում, քյնում տահանց տոնը։ Ըռութանան տեսնում ա տահանք տանը քոն իլած։ Ինքյն էլ, տըռանը բլկոնեն

մին կառավաթ ա ընում ակուշկեն տակեն, յրան պարանց ա ընգնում միչև վեր եր կենան։ Տղան քնավ ա ընցնում։ Հարուստեն ախչիգյը եր ա կենում, տեսնում մին տղա, կլխեն մին լավ փափախ, մաչին մին թոխտ, ինքն էլ քոն իլած։ Ախճիգյը թոխտը յոր ա օնում, տեսնում մաչին կյրած, վեր. «Ա կնեգյ, էտ տղեն տոք ղսարեն, սպանեթ»։

Ախչիգյը էա թոխտը ճղորտում ա, մին թոխտ կյըրում, տնում փըփաղեն մաչին, վեր. «Ա կնեգյ, էտ տղան վեր կյա ըտեղ, կհվաքիս իմ պարիկամնիս, մին լավ հրսանեքյ անիս, ախչիգյըս տաս ուրան»։

Կնեգյը ուռութանան եր ա կենում, տեսնում բաի պեն։ Ծեն ա տամ ուրան պարիկամներեն լոխճին, մին լավ հրսանեքյ անում, տրան հետե։

Շատ ըն կենում, խրեգյ ըն կենում, էտ ըխճըկանը մին խոխա յա ինում։ Խաբարը պիրում ըն, վեր հարուստը կյամ ա։ Մին պեն, վեր էտ հարուստեն կնեգյը էրկու տղա էլ ա ընում պիրած, մըծըցրած։ Վեր հարուստը կյամ ա տանան մուտանում, փեսան, ախչիգյը՝ խոխան խտտեն, ուրան խոխենքյը, քյնում ըն, թա տեսնան։

Էտ հարուստը, վեր էտ տղեն տեսնում ա, ասում ա.— Պա էս տղան հո՞ւ վա, էս պիծի խոխան հո՞ւ վա։

Կնեգյն ասում ա.— Տա քու փեսատ ա, էս մինն էլ քու թոռնըտ ա։

Կյամ ըն տոն, հարուստը մթկումը որոշում ա, վեր էտ տղեն սպանել տա։

Քյնում ա ուրանց դամուրչուն կոշտը, ասում.— Մին տղա յըմ ըղրկըլական կոշտտ, վեր կյա, կըքցիս կրակը, էրիս։

Էտ ասում ա, կյամ տոն, ուրան փսեն, թա.—Բա՛լա, բա՛լա, մին վաղ տո, քյինի դամուրչուն ասե խըլեղըս քե տա պեր։

Փեսան տուս ա կյամ, թա քյնի, դըրբըզումը հարուստեն մեծ տղան պտահում ա։

Ասում ա. — Ըշտե՞ղ ըս քյինում։

Ասում ա.—Քյինում ըմ դամուրչուն անա հորըտ խըլեղը պիրիմ։

Տա ասում ա.— Տու քյինի տոն, յրես քյինամ պիրիմ։

Տղան քյընամ ա, փեսան կյամ ա տոն։ Հարուստըն ասում ա. — Պա խըլեղս հո՞ր ա։

Փեսան ասում ա. — Ծեր տղան պտահից, ասից, վեր յրես կքյնամ պերիմ։

Հարուստը կըզնըվըմ ա, եր ա կենում վաղ տամ, քյինում, տեսնում տղան քցած կրակեն մաչը, էրած։

Հարուստը մին էլ ա պայման կապում ղասաբեն նհետ, վեր տղան ըղարկե, քյինի, հանցու կլոխը կտրե։

Կյամ ա տոն, փսեն թա. — Բա՛լա, բա՛լա, քյինի քաղաք, ղսաբեն ասե էրկու գյրվանքա մես տա, պեր։

Փեսան տոնա ա կյամ, դրրրզումը պտահում ա հարուատեն պիծի աղան, թա. — Հշտե՞ղ ըս քյինում։

Ասում ա. — Քյնում ըմ քաղաք, մես պիրիմ։

Հրուատեն տղան ասում ա. — Համոթ ա, տու քյինի տոն, յրես քյինիմ պիրիմ։

Փեսան կյամ ա տոն, հարուատն ասում ա.— Պա մեսը հո՞ր ա։

Ասում ա.— Ծեր տղան պտահից, ասից. Յրես կրքյինիմ պիրիմ»։

Հարուատը շատ կզնված, կրլխեն վայ տալավ եր ա կենում, քյինում, տեսնում էտ մին տղեն էլ ղասաբը սպանած։

Փուշմանած կյամ ա տոն, կնգանը ասում. — Ա՛ կնեգյ, մեր էս փեսան սա յա, սա յա, սա յա,— պատմում ա, թա՝ հո՞ւնց իլավ, վեր ընգավ ուրանց տոն։ Բխտրյեշին էլ ասալ ա, վեր քու հարուատոթունիտ պիտի տար տրեռնա մին քյասիբ տղա։ Տրանա ետը ուրան հինչ հրուատոթուն օնե, տամ ա էտ քյիսիբին տղեն, ինքյը հռանում ուրան իլածան։